ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մարտի 5-ի ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Հակոբի Հովհաննիսյանի**՝ ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. Գ.Հ.Հովհաննիսյանը 2020 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնում որպես «Ռուսաց լեզու» դասընթացի ավագ դասախոս (01.09.2020 - 31.08.2020՝ ասիստենտ (0,75 դրույք), 01.09.2021 - 31.08.2023՝ դասախոս (1,0 դրույք), իսկ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ավագ դասախոս (1,0 դրույք)): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Գ.Հ.Հովհաննիսյանը ծնվել է 1977 թվականի դեկտեմբերի 18-ին Աբովյան քաղաքում: 1984-1994 թթ. սովորել է Աբովյանի N 4, այնուհետև՝ N 7 հանրակրթական դպրոցներում: 1994 թվականին տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնության Տյումեն քաղաք: 1995-2000 թթ. սովորել է Տյումենի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում (առկա ուսուցում) «Բանասիրություն» մասնագիտությամբ: 30.08.2000 - 01.04.2003 աշխատել է Տյումենի պետական համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնում. նախ՝ լաբորանտ, այնուհետև՝ ասիստենտ: 2001-2005 թթ. սովորել է Տյումենի պետական համալսարանի լեզվաբանության ամբիոնի ասպիրանտուրայում (հեռակա ուսուցում)՝ «10.02.01 - Русский язык» մասնագիտությամբ: 2006 թվականին տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն: Նույն թվականին ընդունվել է աշխատանքի «Արտաքին տնտեսական կապերի,

տնտեսագիտության և իրավունքի Սանկտ-Պետերբուրգի ինստիտուտ» բարձրագույն կրթական ուսումնական հաստատության Երևանի մասնաճյուղի ռուսաց լեզվի և խոսքի մշակույթի ամբիոն որպես դասախոս: 2008-2019 թթ. աշխատել է «Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարան» բարձրագույն մասնագիտական կրթության ֆեդերալ պետական կրթական հաստատության Երևանի մասնաճյուղի ռուսաց և օտար լեզուների ամբիոնում. նախ՝ դասախոս, ավագ դասախոս, 2013-ից՝ դոցենտ պայմանագրային կարգով, 01.04.2013 - 01.09.2013՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, միաժամանակ կատարել է գիտական խորհրդի գիտական քարտուղարի պարտականությունները: 2019-2021 թթ. աշխատել է Հյուսիսային համալսարանի լեզուների, գրականության և լրագրության ամբիոնում, 2017-2020 թթ.՝ Աբովյանի բազմագործառույթային պետական քոլեջում (համատեղությամբ), 2019-2020 թթ.՝ «Գ.Վ.Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական բյուջետային ուսումնական հաստատության Երևանի մասնաճյուղում (համատեղությամբ): Նրա հետաքրքրությունների ոլորտներն են՝ ռուսաց լեզվաբանություն, անձնանունների ուսումնասիրություն, ռուսաց լեզու և խոսքի մշակույթ, ռուսաց լեզուն մասնագիտական հաղորդակցության մեջ, գործարար նամակագրություն: Մասնակցել է տեղական և միջազգային վերապատրաստման մի շարք դասընթացների և գիտաժողովների:

Ամուսնացած չէ:

Գ.Հ.Հովհաննիսյանը 2005 թվականի նոյեմբերի 18-ին Տյումենի պետական համալսարանի ատենախոսությունների խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Функционирование армянских антропонимов в русской речевой среде (ха материале художественных текстов XIX-XX вв) (Հայկական անձնանունների գործունեությունը ռուսական խոսքային միջավայրում (XIX-XX դարերի գեղարվեստական տեքստերի նյութերի հիման վրա))» թեմայով (գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Նիկոլայ Կոնստանտինի Ֆրոլով): 2006 թվականի ապրիլի 21-ին Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2023 թվականի դեկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից Գ.Հ.Հովհաննիսյանին տրվել է հավաստագիր (№ 0521) գիտական աստիճանի դիպլոմի համապատասխանեցման մասին, ըստ որի՝ Գայանե Հակոբի Հովհաննիսյանի բանասիրական գիտությունների գիտական աստիճանի դիպլոմը (ՀՏ № 179480) տրված (21.04.2006 թ.) Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից

համապատասխանեցվում է Հայաստանի Հանրապետության բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի դիպլոմին: Նա հրատարակել է 25 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 20 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 9 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում, 8 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում):

Լեզուների ամբիոնում աշխատելու ընթացքում Գ.Հ.Հովհաննիսյանը իրեն դրսևորել է որպես նպատակասլաց, պարտաճանաչ, աշխատասեր, բանիմաց, բարեխիղճ մասնագետ: Վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հարգանքը:

Լեզուների ամբիոնը միաձայն (կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Գ.Հ.Հովհաննիսյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Հակոբի Հովհաննիսյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 51-ը, քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Հակոբի**

Հովհաննիսյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Գայանե Հակոբի Հովհաննիսյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Բանասիրական գիտություններ»** բնագավառի **Ժ.02.04՝ «Սլավոնական լեզուներ»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. մարտի 5
Երևան